

ՏԱՍՆԻԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կես տարեկանը 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք ղրմում են ուղղակի
Тифлис. Редакция «Мелк»

Խմբագրատունը բաց է առաւօտան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Ղարսից: Նա-
մակ Ներքին-Նախարարից: Ներքին լուրեր: ԱՐ-
ՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Թիֆլիս: ՀԱՅԿԱՅԻՆՆԵՐ:
— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ:
Ուսուցչական ժողով և կաթողիկ հայեր:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՂԱՐՍԻՑ

Սեպտեմբերի 1-ին

Ղարսի գանձ Ղարսից, կանգնեց ըստ բնական-
դակ լեռան գագաթին և նայեց մեր ոտքերի
տակ՝ երկարատե երաշտով լինի լեռան-
ձված լայնատարած դաշտերին, որտեղից բարձ-
րանում է Արաշկերտից գաղթական գիւղերի ծու-
լները: Ինչո՞ք թշուառներ, ողորմելի գաղթական-
ներ: Կեանք չը կայ, կենդանութիւն, չարժում
չը կայ, ոչ մի միտքով չէ չը կայ, դաշտերը
չորացած, ոչ չունենալու պատճառով՝ հողագոր-
ծութիւնը անպարզիւն, ամեն բանի թանցութիւն,
քնակիչների երեսին մեռելութիւն է փայլում: ա-
մեն տուն աղքատ, թշուառ, ծանր պարտքերի
տակ ճնշված, խորին տղիտութեան մէջ խորա-
սուզված: Գետնախոր անհրաժեշտ կենդանի-
ների որջերից էլ վատթար: Նրանք այսօր, մի և
նոյն որջի մէջ, մի կողմում հացի թորման է ծը-
լում, միւս անկիւնում էլ ու տավարը դուռն,
բառաչում, երբորդ անկիւնում անբաղդ մայրը իր
մերկ և թշուառ դուստրերի հետ նստած են
տաւարի աղբի կշտին: Վերջապէս, շատ թշուառ-
ներ բնակվում են տաւարի հետ, ուտում են տա-
ւարի հետ և քնում են տաւարի հետ:—Շրջներ
գիւղի մէջ. ճշ, ինչ դարձուրելի կեղտոտութիւն,
ինչ խարխուղ լարձիկներ, ինչ խուլ փողոցներ,
նկարագրել անկարելի է:

«Ինչպէս էր ձեր երկիրը, Ամի, հարցնում ես
մի ծերունու, այնտեղ էր լաւ, թէ այստեղ...
—«Թա, հո, թա, հո, մի խոր հառաչելով
պատասխանում է վերադարձած ծերունին, և շա-
րունակում ծխաբաշխը, աղայ ֆան, մեր էրկիր
սուրբ էր, մեր վաթան անուշ էր, մեր դուրսն
ջուղիկ էր, մեր խող օսկի էր...» Իսկ, մեր ման,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՈՒՍՈՒՅՃԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՆԻ ԿԱԹՈՒԿԱ ԶԱՅԵՐ

I

Այս րօպէլիս Թիֆլիսում գրւում և Վոլո-
կասեան հայոց թեմական ուսուցչական ժողո-
վը: Ուսուցչական ժողովի նպատակը և վախճանը
պէտք է լինի, դաւառական ուսուցչական մասնակ-
ցութեամբ՝ կատարելա ծանօթութիւն ունենալ
Վոլկասի հայոց ներկայ մտաւոր կեանքի վերաբե-
րութեամբ, և ընդհանուր մանկավարժական ըննա-
դատութեամբ՝ պատրաստել այն ծրագիրները, ո-
րոնք պէտք է հիմք լինեն մեր ապագայ դպրոցա-
կան կեանքի ծառայողութեանը: Մինչև այսօր,
Ուսուցչական ժողովի նիստերում յարցուցված են
վճռված են շատ ու շատ մանկավարժական հար-
ցեր, բայց մի խնդիր, որը ինքն ըստ ինքեան մեզ հա-
մար շատ հետաքրքրիւն է, այն է, թէ Ուսուց-
չական ժողովը դատարարական գործում
ի նկատի ունի՞ արդեօք Կովկասում ապ-
րող հայ-կաթողիկներին ներկայ մտաւոր կեանքի
թէ ոչ, մեզ հաստատ ոչինչ յայտնի է: Յայտնի
է միայն, նրանց անտարբեր ըուծվելու, և հայ-
կաթողիկներին կողմից այն դատապարտելի առանձ-
նութիւնը, որ չեն կամենում յարմար րօպէսներում
իրանց ներկայ մտաւոր վիճակը, լաւ և վատ կող-
մերով ցոյց տալ ընդհանուր հայոց» կրթութեան

մեր դրվանք, մեր մամլաբեւեմ... յոտայ ինչ կայ
խորքան: Մեր մատ տարանք, մեր աչք խանե-
ցինք, օրթէ թողնք մեր անուշ էրկրներ ու է-
կանք յոտայ, քօչեցինք էրկրէ էրկիր...:

Վերադարձած ծերունու ողբալի պատմութեան
վերջ չը կար. նա խօսում էր սրտի խորքերից,
նա իր «մամլաբեւեմ» մտաբերելիս խելագար-
վում էր և իր աղիւս խօսքերով սրտաշարժում էր
լսողներին և ապառաժ սրտերին կարեկցութիւն
հրաւիրում, իսկ ինքն ներքին ալեկոծութիւնից
յուզված էլ չը կարողանալով շարունակել, ծխա-
բաշխը բերնին դնեց ու կատաղաբար ծծեց:

Այն անիծեալ գաղթականութիւն, քանի չէ
քաղաքներ ևս աւերակ դարձրել, քանի երկիրներ
քանդել, որքան ժողովուրդ անբաղադրել...

Կատարարութիւնը անցեալ ուղին այս դաղ-
թական գիւղերի բնակիչներին փող է բաժանելու
եղել: Բայց այժմ, որպէս առատ տարի, այդ բա-
ժանած փողերը յետ է պահանջում: Ի հարկէ
խեղճ բնակիչները մեծ դժուարութեամբ կարող
են այդ պարտքը լրացնել, քանի որ մի հասարակ
ապրուստ հազիւ են ձարում:

Կարող են չունեն, ոչ մի գիւղում երկրեցի չը
կայ. երեք չորս գիւղին միայն մի աղետ քաճա-
նայ է կանաւաբուս: Տարին մի անգամ հազիւ
թէ պատարադի երես են տեսնում: Մկրտում են
տներում, դաշտերի մէջ:

Ի հարկէ սուրբ Էջմիածինը շատ հեռու է և ա-
մենին պարտականութիւն չունի գոնէ հոգեպէս
միտքով արեւոյ այս ողորմելի արարածներին:

Յանուն գաղթականութեան հաւաքված գու-
մարները ինչ եղան: Այս նպատակով Ժո-
ղոված 17 հազար ր. ինչ արեց Էջմիածինը...

Այնքանք Ղարսի միւս կողմը դէպի Գեօրայ,
մի և նոյն կեղտոտութիւն, մի և նոյն չքաւորու-
թիւն, մի և նոյն անյաջող հանդամները թա-
ղաւորում են և այստեղ: Ու՛մ կուզես հարցրու-
նայ, վայ նաւարի կօլայ կերթանք» կը պա-
տասխանէ քեզ:

Սը դարմանաւ, ընթերցող, որ այս դաւառում
18 դիւղ ոչ մի հատ քահանայ չունեն: Տարին
թով առանց ժամի, առանց պատարադի անց են
կացնում: Շատերը երկար ժամանակի աղբիւր-
թեան տակ, բոլորովին սառնացել, խորթացել են
աղային երկեղեցուց, մոռացել են իրանց կրօնը:
Շատ անգամ պատահել է որ ննջեցեալը աշխար-

հական մարդիկ տարել թաղել են. շատերը ա-
ռանց հաղորդութեան, առանց խոստովանութեան
կնքում են իրանց երկրաւոր կեանքը ի նախա-
տինք մեր ազգութեան:

Ղարսի եպիսկոպոսը այս գիւղերից մէկի հա-
մար ամբողջ երկու տարի է կը գրէ Էջմիածին
լուծում խնդրելու մի քահանայ ձեռնադրելու,
բայց նա (Էջմիածինը) ամենայն անտարբերու-
թեամբ անցնում թղթերը «խարտէ» տակը դար-
սելով կը բաւականանայ: Սը գիտեմ, ինչպէս բա-
ցատրել սուրբ սինդի այդ հակաքրիստոնէական
վարմունքը: Չարմանալի բան է. 18 դիւղ, հազա-
րաւոր մարդիկ մի քահանայ են խնդրում. բայց
Էջմիածինը ոչ «այդ» է ասում և ոչ «ոչ»: Մա-
նուանդ այս բանը առաջարկողը Ղարսի ա-
ռաջնորդն է, բայց Էջմիածինը դանաղան քաղա-
քավարի միջոցներով հալածում է Ղարսի առաջ-
նորդին և նրա ոչ մի ասածին ուշադրութիւն
չի դարձնում, որ վերջինս յուսահատվի և ինքն ի-
րան քաջի Ղարսի վիճակից:

Վերջին ձեռնադրութեան ժամանակ Շիրակայ
գիւղերից Էջմիածինը ձեռնադրեց մի քանի անյալի-
սի անբարոյական, բոլորովին սղետ մար-
դիկ, որ տեսնողն ու լսողը մեռնում են զարմացած:

Հանապարհօրդ

ՆԱՄԱԿ ՆԻԺՆԻ-ՆՈՎՂՈՐՈՒՅՑ

Օգոստոսի 31-ին

Յուլիս 25-էն ի վեր, երբ տօնաւաճառի մեծ
թաղածումը ներկայացումներ սկսվեցան, արդէն
աֆիշաներում անօնա կար, որ դէկորացիայի
պատրաստութիւն են տեսնում ա. անգամ ներ-
կայանելու «Путешествие на Московскую выс-
тавку изъ Баку, по Каспійскому морю, по
Волгѣ, по Нижегородской желѣзной дорогѣ».
5 դործողութեամբ և 8 պատկերներով դրաման,
որի գլխաւոր հերոսը պէտք է լինէր հայազգի
«Կարապետ Քէլիսուզով»: Այնպէս յուլիս, եկա-
օգոստոսը և սկսեցին յայտնել, որ կարճ ժամա-
նակամիջոցում այդ դրաման բիմի վրայ կը կենդանա-
նայ: Կովկասցիք, որոց մեծամասնութիւնը այստեղ
հայերն են կազմում, ամենայն անհամբերութեամբ
սպասում էին այդ ներկայացման և շատերը նոյն
այդ պատճառով 5—6 օր աւելի գիւղերցիին այս-

լու հետաքրքրի անձնաւորութիւնների ուշադրու-
թիւնը նրանց ներկայ մտաւոր վիճակի վրա, այն
վիճակի, որ մեր շատ մատենագիրների արհամար-
հութեան և անտարբեր մոռացութեան դատա-
պարտութիւն է եղած, իսկ մեզ համար, շատ
ծանրաշխու, ժողովրդական մի հարց է, որ պա-
հանջում է իր վրա ուշադրութիւնը, եթէ մենք
չենք կամենալ կորցնել մի բուռն ժողովուրդ
տղիտութեան անդրդի մէջ:

II

Անդրկովկասի հայ-կաթողիկները մեծ մասամբ
1828—1856 թվի գաղթականներն են թիւը բաց
Հայաստանից, որ այժմ բնակվում են Անդրկով-
կասի դանաղան գիւղերում, և կազմում են առան-
ձին մի կրօնական համայնք:

Նրանք ունեն իրանց հոգևոր նախագահ անդամ,
և երկեղեցական բաժանմամբ, բաժանված են 4 աւաղ
քահանայութեան վիճակի վրա, և ստորադրված
են Սարատովի լատին եպիսկոպոսի իրաւասու-
թեանը: Վիճակները հետեւեալներն են: 1-ը. Արալ-
խայի վիճակ, բաղկացած է 10 հայկաթողիկ գիւ-
ղերից, որոնց 4 դիւղը, ինչպէս նաև Արալխայի
մի մասը, վրա աւաղ օս հայ-կաթողիկներն են:

2-դ. Արալխայի վիճակը բաղկանում է 12
հայ-կաթողիկ գիւղերից, որոնց 5 դիւղը բնակիչ-
ները, թիւը աւաղ օս հայ-կաթողիկներն են:

3-դ. Վոլոկասի վիճակում կան 5 հայ-կաթողիկ գիւ-
ղեր:

Եւ 4-դ. Ալեքսանդրօպօլի վիճակում կան 12
հայ-կաթողիկ գիւղեր, բացի քաղաքի բնակիչնե-

տեղ: Վերջապէս օգոստոս 27-ին աֆիշաներ ցրվե-
ցին, որ այդ դրաման կը ներկայացնուի շաբաթ
օր, 28-ին, իսկ 28-ին առաւօտը թատրօնական
առանձին յայտարարութիւններով գեկուցին, որ
դէկորացիայի մի փոքր պակասութեան պատճա-
ռով ներկայացումն կը թողնուի յետագայ օրուան,
կիրակէին 29-ին, մի և նոյն ժամանակ ձայն ար-
ձակվեցաւ, որ այդ ներկայացման գեկորացիայի
համար ծախսված է աւելի քան 7000 ր. և գուցէ
հէնց այդ պատճառով էր տեղերի գինը սովորա-
կանից կիսով չափ աւել նշանակած. չը նայելով
դրան, ամենայն դ շտապում էր չուտով տոմսակ
ձեռք բերել: Ներկայացման օրը, որպէս ասում
են, տեղերի գինը դարձեալ կրկնապատկեցան,
բայց էլի երեկոյան ժամ երեքին մի հատ տոմ-
սակ չը կար: Ներկայացումից դու երկու ժամ
առաջ անհամբեր ամբոխը լցրել էր թատրօնը,
որը իմ կարծիքով 5000-ից աւելի մարդ է տեղա-
ւորում—մինչև անգամ պահանջ եղաւ խրաքան-
չիւր լծայի երկուական աթոռներ սակեցնել, իսկ
երբորդ և չորրորդ եւրոպեաներ այնքան մէկմէկու-
վա թափված լինէին, որ երկուգլխի էր լինում
տակի նստողներին:

Վերջապէս սկսվեցաւ ա. դործողութիւնը և բե-
մի վրա հանդիսացաւ մի ռուս հասարակ գերդաս-
տան, որի վրա մի յայտնի գաղափար կազմել
շատ դժուար կզաւ, միայն այսքան յայտնվեցաւ,
որ ընտանիքի օրիորդը նշանված էր մի թեթևոտ-
լիկ երիտասարդի վրա. մայրն և փեսացուն շտա-
պում էին պսակել, իսկ հայրը մոտժում էր ծա-
ծուկ Մօսկովա քնալ երկի հարսանիքի ծախսերից
խուսափելով, բայց այդ միտքը յայտնվում է կը-
նոջը, որի համար և ընտանիքի մէջ խուլութիւն
է ընկնում. վարագոյրն իջնում է: Կէս ժամից ա-
ւել անտրակտ է տեսնւ. վերջը հասարակութեան
աղաղակներով և պահանջով բացվում է:

Երկրորդ դործողութիւնը պէտք է լինէր «Կա-
րապետ Քէլիսուզով» պիւստանում. ներկայա-
ցաւ ճանապարհվելու համար պատրաստված
մի շողենաւ. այստեղ երեցեալ «Կարապետ Քէլի-
սուզովը» ըստ երևոյթին թիֆլիսեցի հայ, (բայց
շատերը կարծում էին, որ դա բաղդացի կը լինի),
որի ինչ պաշտօնի և ինչ դեր կատարելը չորոշ-
վեցաւ. միայն յանկարծ շփոթութիւն ընկաւ, որ
իրը թէ ալեկոծութեան նշաններն են նշմարվում.
աստղապայան հաստատեց այդ. ռուս տիկինները

րից: Այդ 4 թիւնի հայ-կաթողիկների թիւը, նոր
պաշտօնական հաստատութեանց համաձայն հա-
նում է 21 հազար հոգու: Մենք այստեղ չենք խօ-
սում Ռուսաստանում և Կովկասի դանաղան գիւ-
ղերում ցրված հայ-կաթողիկների վրա, որովհետեւ,
մեզ հաստատ յայտնի չեն նրանց բնակութեանց
տեղերը, և նրանց թիւը, յայտնի է միայն, որ
պէտք է լինեն բաւական թուով. դեռ չենք ուշա-
դրութիւն դարձնում Կովկասի խուլ տեղերում
ապրող հայ-կաթողիկների վրա:

Եթէ մենք այստեղ չենք խօսում նոր նուաճած
երկրների, այսինքն, Ղարսի, Արդուինի և Արդա-
նուզի հայ-կաթողիկ հասարակութեանց վրա, դրա
պատճառն այն է, որ նրանց հասարակական կեան-
քը անձանօթ է մեզ, և որոնց թիւը հանում է
11 հազար հոգու: Նրանք ունեն իրանց թեմական
եպիսկոպոսը, որ նստում է Արդուինում, և կառա-
վարվում են առանձին երկեղեցական իշխանու-
թեամբ: Բայց և այնպէս, ընդհանուր տեսակետով,
որպէս կրօնական առանձնացած մի համայնք,
ոչինչ առանձին տարբերութիւն չունեն միմեան-
ցից, մտաւոր զարգացման խնդրի վերաբերու-
թեամբ: Յանկալի է, ի հարկէ, որ մեր կրօնակից
եղբայրները աշխատելիս, որքան կարելի է, համե-
րաչափութիւն պահպանել միմեանց մէջ, և մեր
պարբերական հարապարակութեանց միջոցաւ, ծա-
նօթացնելին հասարակութեանը իրանց առօ-
րեալ կեանքի պայմանների հետ, որ հաւասարա-
պէս կապ ունի մեր ապագայ հասարակական
կեանքի հետ: Գալով վրացախօս և թրքախօս հայ-

Ինչպէս ամեն մի միաբանութեան մէջ, այդպէս
և այստեղ պատահում են երբեմն փոքր սկան-
դալներ, բայց մենք այստեղ չենք յիշի: Ուսում-
նարանը հասարակութեան կողմից ընտրված հո-
գաբարձութիւն չունի, այդ պատճառով, պէտք է
յիշել, որ հասարակութիւնը միշտ տառն է դէպի
ուսումնարանը, և նիւթիական օգնութիւն ունեւ-
նէ տալիս: Ուսանելի առարկաները, ինչպէս սրա-
նից առաջ, այժմ էլ Նոյնն են, անփոփոխ են դասա-
տութեան թէ՛ առարկաները և թէ՛ եղանակը:
Հասակաւոր տիրացուներին դաս է նշանակում
վարդապետը, իսկ փոքր հասակ մանուկներին,
տիրացուներից մէկը: Եթէ աշակերտը բոլորովին
անգորգէտ է եկել ուսումնարանը գիւղական շրը-
ջանից, այդ ժամանակ, նրա հետ սկսում են
պարապել քերականից սկսած մինչև սեղմուս
և նարակ, ի հարկէ զրաբար լինելով, իսկ ինչէ՛ աշա-
կերտները սովորել են գիւղական քահանայի մօտ
այդ գրքերը, այն ժամանակ, նրան դաս կը տան
«Գիտուն տղայ» ասված Գրիստոնէական վարդա-
պետութիւնը: Պէտք է նկատել այստեղ, որ ա-
ռաջի դժուարութիւնը աշակերտի համար ընդուն-
նականապէս և սեփականաբար է: Ուսումնարա-
նում ընդունված դասական գրքերը բացառապէս
վկենիցիայի տպագրութեան գրքերն են, որոնք կա-
րող են ևս առանց արդել, քի, ազատ մտաւոր օրոնդ

այդ որպէս կ'օրհանէր ուղարկեցան Բէ-
կեր-փաշա և Սպիդ-փաշա (այժմեան ար-
տաքին գործերի մինիստրը), բայց նրանց
զեկուցումները չը հրատարակեցան, որով-
հետև առաջինից աւելի պայծառ և խիստ
յայտնվեցան: Վերջապէս, մտադրութիւն
կար Աճմար-Վէֆիկին ուղարկել, կարծես թէ
վերանորոգութիւնների անհրաժեշտութեան
մէջ կարելի էր կասկածել: Այդ բոլոր յանձ-
նաժողովների և քննութիւնների պատճառ-
ները և խնդիրներն են ինչպէս, Գո-
շէն և Գեօֆերին գեապանները: Բայց որով-
հետև ամենքի համար պարզ էր, որ այդ
վերանորոգութիւնները երբեք չեն մոցնալի,
այդ պատճառով Ռիլսոն մի շատ օտարտի
գրութիւն ուղարկեց, որի մէջ պայտուցա-
նում էր, որ վերանորոգութիւնների չը
մոցնելը, որոնց վրա հիւստատուները պետք
է հսկելն, ամենամեծ վնաս հասցրեց Անգ-
լիայի անուանը և որ, այդ պատճառով թէ
նրան, Ռիլսոնին, նոյնպէս և նրա օգնա-
կաններին հարկաւոր է յետ կանչել: Ինչ
Գեօֆերին ուղարկեց այդ հաղորդութիւնը
արտաքին գործերի մինիստր լորդ Գրէնվի-
լին, նրա ուղարկութիւնը դարձնելով այն
բանի վրա, որ Ռուսաստանի ազդեցութիւ-
նը հայերի վրա, Անգլիայի այդ անգորու-
թեան պատճառով, օրից օր աճում է: Վե-
րին աստիճանի նշանաւոր է այն հանգաման-
քը, որ Անգլիան հենց այժմ է ոչնչացնում
այդ միտանքը: Չար լեզուները կարող էին
պնդել, որ այդ այն պատճառով է կատար-
վում, որ Ռուսաստանին գործելու ազատու-
թիւն տրվի Հայաստանում այն դէպքում,
եթէ այդ պետութիւնը կը ցանկանայ վար-
ձապրութիւն որոնել այնտեղ անգլիական
հովանաւորութեան տեղ եզրկատուի վրա:
Այդ բացատրութիւնը, այնու ամենայնիս,
ճիշդ չէր լինի: Ռիլսոնի հաղորդութիւնը
գրված էր և մինչև անգամ խրախուսված
այնպիսի ժամանակ, երբ անգլիական ար-
շաւանքի մասին եզրկատուութեամբ էլ չը
կար: Անգլիական ինժեներները պտտեցին
ամբողջ Անատոլիան և իրանց տրված յանձ-
նարարութիւնը կարելուն չափ հիմնաւորա-
պէս կատարեցին: Բայց որովհետև վերանո-
րոգութիւնները մոցնելու մասին խօսելն ան-
գամ դադարեցին, այդ պատճառով նրանց
ոչինչ չէ մնում անել և Կիպրոսի դաշնա-
գրի առաջին պարագրաֆը կորցնում է իր

ոյժը: Ի՞նչ կը մնայ այժմ ամբողջ դաշնա-
գրից:

• ՄԵԱԿԻՆ ԶԵՌԱԳԻՐՆԵՐ
ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԵՆՑ

ՄՅԱԿԱՆ, 8 սեպտեմբերի: Կայսրը, Կայ-
սրուհին, թագաժառանգը և Մեծ Իշխաններ
Գեորգի, Ալեքսի, Սերգէյ և Պավել Ալեք-
սանդրովիչներ ժամանեցին այստեղ այսօր
առաւօտեան: Կայսրանում նրանց ընդունե-
ցին բոլոր քաղաքական և զինուորական
պաշտօնականները, քաղաքի ներկայացուցիչնե-
րը և պատուաւոր պահապան զօրք երաժշ-
տութեամբ: Բոլոր հրապարակները և փո-
ղոցները, որոնցով անցնում էին Բարձրագոյն
Անձինք, բաց կառքերում, լի էին ժողովրդի
որ ուղևորված կերպով ողջունում էր թա-
գաւորին: Իվերեան մատուռի մօտ թագա-
ւորը, թագուհին և բոլոր Բարձրագոյն Ան-
ձինք համբուրեցին պատկերը, այնուհետև
ուկերովեցին դէպի Կրէմլի պալատը: Մի-
ժամ առաջ հասաւ Մոսկվա Չերնոգորիա-
կան իշխանը իր ուղևորներով:

ՌԵՍԿԱՆ, 8 սեպտեմբերի: Առաւօտեան 9
ժամին ուղևորվեց դէպի Կուրսկ Մեծ Իշ-
խան Միխայիլ Նիկոլաևիչ իր ընտանիքով,
կայսրանում զինուորացիներ նրանց զինուորա-
կան և քաղաքական բարձր պաշտօնականները
և քաղաքի ներկայացուցիչները աղ ու հաց
մօտ տարան:

ՄԻՆՍԿ, 7 սեպտեմբերի: Գումայի մէջ
վճիռ կայացաւ սկուտեղ մատուցանել թա-
գաւորին թագաւորութեան ժամանակ:

ԿԱՆՈՒՊԱՆ, 7 սեպտեմբերի: Կնիշկներին
յանձնաժողովը վերջացրեց Ռիստոֆ-Վիկա-
դեմեան դէի քննութիւնը: Ճանապարհի
վարչութիւնը ստացաւ մինիստրութիւնից
1882 թ. համար նախահաշիւը: Մուտքը
հաստատված է 2,800,000 ռ. իսկ ծախսը
2,712,265 ռ.: Մինիստրութիւնը շատ պա-
կասեցրեց ծախսերի նախահաշիւը, շնչելով
վարչութեան նիւթագրած գէնիցիլը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 սեպտեմբերի, Ներքին
գործերի, Ֆինանսների և պալատական մի-
նիստրները սեպտեմբերի 7-ին Մոսկվա ու-
ղևորեցան: Ֆինանսական լրագրիւր իր
պաշտօնական մասի մէջ հաղորդում է, որ
Հելսինգֆորսի և Սվիաբորգի մէջ օֆիցեր-
ները և ուսուստիճանաւորները սօցիա-
լիստների բաժին էին կազմել: Սեպտեմբե-

րի 2-ին խուզարկեցին Հելսինգֆորսի ուս-
աց զինավորակ ուսուցիչների և օֆիցեր-
ների բնակարանները: Խուզարկութեան ժա-
մանակ Սիկորսկու, Լեօնտեֆի և պրապորշ-
չիկ Մոշկինսկու բնակարանների մէջ յանցան-
քի ապացոյցներ գտնվեցան և այդ բոլոր
անձինք կալանաւորված են: Սեպտեմբերի
7-ին Կայսրը, Կայսրուհին, թագաժառանգը,
Մեծ Իշխան Գեորգի Ալեքսանդրովիչ, Մեծ
Իշխաններ Ալեքսէյ, Սերգէյ և Պավել Ա-
լեքսանդրովիչների ուղևորութեամբ բարե-
հաճեցին Մոսկվա ուղևորվել:

ՄՅԱԿԱՆ, 7 սեպտեմբերի: Այսօր սուր-
հանդակի գնացքով զինուորահանգապետ
Իշխան Գլոբորովով ուղևորվեցաւ Տվեր
Կայսրին և Կայսրուհուն զինուորներու հա-
մար: Էգուց սեպտեմբերի 8-ին ժամի 11½
նշանակված է Բարձրագոյն գնացք Ռուսկե-
սկի մայր-եկեղեցին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 սեպտեմբերի: Ռու-
սաստան յետ բերվող ջվախների հարկի հար-
ցի մասին լավեցան էկսպերտների կարծե-
րները: Այդ հարցի վերջնական քննութիւնը
մանուֆակտուրայի և առևտրի խորհրդի
մէջ եկող շարքով կը լինի: Այսօր ուղևոր-
վեցաւ Մոսկվա չերնոգորիական իշխան Նի-
կոլայ:

ԿԻՆՆԻՆՍԿ, 8 սեպտեմբերի: Սեպտեմբերի
6-ին բացված է նահանգական գէմաուֆի
ժողովը և ընտրված են ներկայացուցիչները
Թագաւորութեան համար: Չորս դասատու-
ներ ունեցող գիւղատնտեսական ուսումնա-
րանների կանոնադրութիւնը քննելուց յե-
տոյ, որոնք հիմնված են Գրանիցա, Պուր-
կարա և Կոպրիստի մէջ վանքական կայքե-
րի մուտքերի հաշուով, իւրաքանչիւր ու-
սումնարանին յատկացրած է 500 դեմիա-
տին հոդ:

ՏԱՄԲՈՎ, 8 սեպտեմբերի: Սեպտեմբերի
6-ին քաղաքային դուման հաւանութիւն
տուեց ինժեներ Բարիի առաջարկութեանը
քաղաքային շրանք կառուցանել 200,000
րուբլով:

ՆՈՒՆՍԿ, 8 սեպտեմբերի: Կամա գետի
վրա ջրի մէջ ընկղմվեցան Բուլլէնկի նաւը
Նիժնեգորեան տարանքներով:

ՄՅԱԿԱՆ, 8 սեպտեմբերի: Սեպտեմբերի
6-ին Մեծ Իշխանուհի Ալեքսանդրա Իոսի-
ֆօֆնա իր որդեկրանցով և Անատոլիա
Միխայլովնա իր ամուսնի հետ այցելեցին

աշխարհահեղին: Երեկ գաղութներ Պենիսա-
կի, որ մեղադրված էր „Русский Бурб-
ер“ լրագրի խմբագրի որդուն ծանր հա-
րաւանքներ հասցնելու մէջ: Նա գատա-
պարտվեցաւ չորս ամսւայ կալանաւորու-
թեանը կալանաւորվածների տանը: Մեղա-
յնքի բաժանելը աշխարհահեղին մէջ նշա-
նակված է սեպտեմբերի 12-ին:

ՌԵՍԿԱՆ, 8 սեպտեմբերի: Այստեղի գեր-
մանական գաղթականները Մոսկվայի աշ-
խարհահեղին մէջ գնեցին պուշկի համար
ոսկէ սերվիկ Խլերիկովի գործարանից, իշ-
խան Բիսմարկին մի ուղևոր՝ հետ սեպտեմ-
բերի 23-ին ներկայացնելու համար, որ
նրա քանամեայ յօրեւանի օրն է:

ՎԵՐԻՆԵ-ՈՒՐԱՆՍԿ, 3 սեպտեմբերի: Սեպ-
տեմբերի 7-ին „Վոդայ“ ընկերութիւնը
գնեց Կոշնի և Ուգեանի երկաթէ գործա-
րանները, որոնք մօտ 10 տարի գործ չու-
նէին: Ուրալի հանքերի ֆրանսիական ընկե-
րութիւնը վերջնականապէս դադարեցրեց
գործելը և ակտիւր ու պասիւր ծախեց ու-
կեհան Սամսոնովին, որ ծախում էր մեքե-
նաները և կայքերը:

ՌԵՍԿԱՆ, 8 սեպտեմբերի: Օկա գետի
վրա այրվեցաւ „Вухата“ նաւը, որ ճա-
նապարհորդներ էր տանում: Առում են, որ
մարդկերանց հետ զօրադրութիւններ են
պատահել:

ԼՈՆԴՈՆ, 8 սեպտեմբերի: Գամիէտի և Սոյ-
կիայի զօրքերը անձնատուր եղան անգլիա-
ցիներին:

Կ. ՊՈԼԻՍ, 8 սեպտեմբերի: Լորդ Գեօֆե-
րին յայտնեց Բ. Գրանը, որ Անգլիան եզրկա-
տուի մէջ չի թող տայ ոչ թիւրքիցի և ոչ
մի այլ պետութեան միջամտութիւնը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԵՆՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 սեպտեմբերի: „Пра-
вит. Вѣстн.“ լրագրի հաղորդում է,
Կայսրը և Կայսրուհին իրանց երեխաների
հետ և Մեծ Իշխաններ Ալեքսէյ, Սերգէյ և
Պավել Ալեքսանդրովիչների ուղևորվեցան:
Նով-
գորդի փոխահապապետ Պլոտարացկուն
Բարձրագոյն հրամայված է Արխանգելսկի
նահանգապետ լինել:

ԽԱՐԿՈՎ, 8 սեպտեմբերի: Երեկ գիշեր
պատահանի վանդակը կտրելով կողոպտ-
ված է քաղաքի Բոժդեսովնիսկայա ամե-

թէ ընտանեկան և թէ ուսումնարանների շրջա-
նում, որոնք ի հարկէ, գրված են ինչ կլասիկական
լեզուով և արևմտեան հայոց բարբառով: Կովկա-
սեցի մի երկամասորի համար, օրինակ, մի լուսն-
ցու, մի վրացաբոս, կամ թրքաբոս հայ-կաթօլի-
կի համար, դուռն աշխատութիւն պետք է, մինչև
որ հասկանայ գրեթէ այդ լեզուի հնչիւնների դար-
ձուածներն: Հայր Ալ. Վ. Արարատեանը իր ու-
սումը ստացել է Լիւդուրմում, այն ժամանակի
նշանաւոր չորեքուրկանների մօտ, և ինքը լու-
կիսիկ է, որ և ունի շատ աշխատութիւն-
ներ այդ լեզուով շարադրած: Բայց դժուարու-
թիւնը այստեղ է, որ նա չէ կամեցել, կամ չէ
կարողացել աստիճանաբար յարմարել ժամանա-
կի պահանջին, և ուսման առարկաները և ձեր
պահել է անփոփոխ: Մի անհատից աւելի չէ կա-
րելի սպասել, որքան նա կարողացել է, աշխատել
է ուսումնարանի բարեկաւութեան համար, մինչ
նրան միշտ երախտապարտ պէտք է լինել, լե-
զուի պահպանութեան համար նրա արած նշանա-
ւոր աշխատութեանը: Պէտք է աչքի առաջ ունե-
նանք նաև այն, որ նա կատարել է իր ուսուց-
չութեան հետ, հոգիոր նախապահ անդամը պաշ-
տօնը և վարել է եկեղեցական կարգապիսի ծանր
պաշտօնը:

«Գիտուն տղան» հայր Ալ. Վ. Արարատեանի
յօրինած բրիտանիական վարդապետութեան մի
տետրակ է, որ բաժանած է զանազան դասերի,
աշակերտը պետք է ամեն մի դաս բնական անէ և
պատմէ, բացի գործնից, այդ դասերը արտադրե-

լով, պետք է աչքի առաջ ունենայ, որպէս վայել-
չագրութեան օրինակ: Կաները պատարտում են
առաւօտեան և ճաշից յետոյ: Այդ դասադրելի
զիլաւոր արդիւնքը աշակերտի համար, բացի բն-
ականացի սովորելուց, և թուրքական պէս ոչինչ չը
հասկանալուց անէ է, որ աշակերտը պետք է իր
ժամանակը վատնէ փետուր գրելի միջնորդութեամբ
նոր տառերով արտադրել այդ ամբողջ դասա-
դրելը, որ եթէ տեսնելու լինեց նոյա վայելչա-
գրութեան ձևը, մենք պետք է յիշենք ինչ ժամա-
նակի արաբական օտօթիւններ, և պարսկական
միջրդանների վայելչագրութեան սխաւանք:

Այդպիսի եղանակով, եթէ աշակերտը ընդու-
նակ է ընթերցանութեան մէջ, այդ դասադրելից
կանցնի աստիճանաբար քերականութեան ա. բ. և
գ. դասերը, յետոյ կը սովորի սրբազան պատ-
մութիւն, և Աստուածաբանութիւն, բոլորն էլ
վերս յիշած եղանակով:

Մի ժամանակ սովորեցնում էին և տրամաբա-
նութիւն, եկեղեցական պատմութիւն, բայց այդ
ուսմունքը երբեք չէր կարող դիւրամարս լինել,
զիւղից յանկարծ ուսումնարան տեղափոխած ա-
շակերտի համար: Այդ ուսմանց հետ հաւասար,
աշակերտը պետք է սովորէ եկեղեցական ժամա-
կարգութիւն, իսկ ճաշնագրութեան համար առան-
ձին դաս կրէր չը կայ, ձայնագրութիւնը սովոր-
ում են յարմարաբար, այսինքն, մի արդարուն
սովորեցնում է միւսին, և այդպէս, ամեն մի տի-
բացու ունի իր դասը իրան ձայնին համեմատ, ու-
րից յառաջ է գալիս այն խառնաշփոթ և աղա-

ւաղած երկնորդութիւնը, որ կորցնում է եղանա-
կի վայելչութիւնը և ճաշակը: Կասապութեան
եղանակը, պարզապէս այսպէս է, որ ուսուցիչը
նշանակում է մի կտոր դաս, աշակերտը պետք է
բերան անէ, աշակերտը կանգնում է ուսուցչի ա-
ռաջ և պատմում է բերանացի դասը, իսկ ընտաղա-
տական հարցեր, մի քանի աշակերտներ մէջ չեն
լինում: Վարդապետի բացակայութեան ժամանակ,
որ ստեղծ է պատահում, աշակերտների դասին
նայում է քահանան որ հազիւ թէ աւելին գիտե-
նար տիրացուից:

Աշակերտների դասերը միմեանց հետ հաւասար
չեն, նայած աշակերտի ընդունակութեանը, և
զարոյց մանկու ժամանակամիջոցին:

Ուսման ընթացքը տեւում է 5-6 տարի, և այ-
նուհետև ընդհանուր հարցաքննութեան միջոցին,
որ լինում է միմեայ վարդապետի ներկայու-
թեամբ, արժանանում են հատուցութեան վկայա-
կանի և դառնում են քահանաներ: Կարող են ար-
ձակուրդը լինում է ամառայ ժամանակներին մի
քանի ամսով, այն ժամանակ, երբ գիւղական
կանքի մէջ հարկաւորութիւն է դրացիում աշ-
խատող օյժերի, և այդպիսով, երկար ժամանակ
մնալով դարձեալ գիւղում աշակերտները վերա-
դառնում են ուսումնարան կոչու ձևերով, և
հաստացած մտքով: Ինչ որ կարողանում են սո-
վորել զարդում, այդ մտանքում են գիւղում,
այդպէս շարունակ նոյա կարգապետ ոչինչ չէ
դուրս գալիս:

Պատահում է շատ անգամ, որ մի աշակերտ

գնալով տուն, այլ ևս չէ վերադառնում, պատահում
է որ շատերն իրանց անբարոյական կեանքի և
բնաւորութեան համար արտաքրվում են ուսում-
նարանից: Ամենացաւալին անէ է, որ անբարոյա-
կանութեան համար արտաքրած տիրացուները, շատ
անգամ գիւղերում յանձն են առնում վարձապե-
տական պաշտօնը, և իրանց վատ օրինակներով
գայլակողութեան պատճառ են լինում միամիտ
գիւղացիների մէջ: Շատ անգամ այդպիսիների ձե-
ռքը, գիւղական հասարակութիւնը բաժանված է
լինում միմեանց հակառակ կուսակցութեան, և
փոխադարձաբար վնասում միմեանց չափերին:

Ինչ կը լինի մի ժողովրդի դրութիւնը, երբ այդ-
պիսի առաջնորդներ կուենայ, երբ տղտին ա-
ռաջնորդը կը լինի կոյրը:

Շեժը Ալեքսանդրապօլի գարոցում եղել է ծայ-
րայից աստիճանում, մինչև աշակերտների անա-
նական դրութեան հասցնելը, պատմական կա-
կանի և դառնում են քահանաներ: Կարող են ար-
ձակուրդը լինում է ամառայ ժամանակներին մի
քանի ամսով, այն ժամանակ, երբ գիւղական
կանքի մէջ հարկաւորութիւն է դրացիում աշ-
խատող օյժերի, և այդպիսով, երկար ժամանակ
մնալով դարձեալ գիւղում աշակերտները վերա-
դառնում են ուսումնարան կոչու ձևերով, և
հաստացած մտքով: Ինչ որ կարողանում են սո-
վորել զարդում, այդ մտանքում են գիւղում,
այդպէս շարունակ նոյա կարգապետ ոչինչ չէ
դուրս գալիս:

Պատահում է շատ անգամ, որ մի աշակերտ

(Կը շարունակվի)

նահանգապետ եկեղեցին: Բեմը ամբողջապես կողորպտված է, տասը արծաթե լապտերներ են պոկված ամենապաշտելի պատկերի առաջից: Ամբոխը հասարակ է եկեղեցու շուրջը: Գողերը դեռ բռնված չեն: ՆՕՎԳՕՐՕԿ, 8 սեպտեմբերի: Տօրֆի հըրգեհնը քաղաքը լցրել է ծխով: Անտառներն էլ են այրվում:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 սեպտեմբերի: Աղջիկային հարկերի հաւաքման կառավարչները պաշտօնի ոչնչացնելու հետ ենթադրված է ոչնչացնել նոյնպես և նահանգական տեղեկային վերակացուներին պաշտօնները: Այսօր տնօրէնացու երկաթուղիների մասնաժողովի նախագահ կոմս Բարանովի յօրեկանը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 սեպտեմբերի: Պետական բանկի 5% տոմսակր առաջին շրջանի արժէք 95 ռ., երկրորդ 91 ռ. 25 կ., երրորդ 91 ռ. 5 կ., չորրորդ 90 ռ. 25 կ., հինգերորդ 90 ռ. 12 կ., Ներքին 5% տոմսակր փոխառութեան տոմսակր արժէք 214 ռ. 5 կ., երկրորդ 207 ռ. 50 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակր արժէք 90 ռ., երկրորդ 90 ռ., երրորդ 90 ռ., ոսկի 8 ռ. 7 1/2 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ 24,09 պէնս, Ամստերդամի վրա արժէ 122,12 պէնս, Ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 205 մարկ 75 պֆ., Փարիզի վրա 253 ֆրանկ 50 սանտիմ:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՐԻ ԱՐՇՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ՆՈՐ ԳՐԻԳՐԻ

„ՍՐԻՆԳ ՀՈՎՈՒԱԿԱՆ“

ԵՐԳԵՐ, ՈՏԱՆԱՐՈՒՆԵՐ ԵՒ ԱՌԱԿՆԵՐ

ընթերցանելու մանուկների համար

ՏԱՆԸ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ

ԳՐԵՑ Ղ. ԱՂԱՆՆԵՑ

Վաճառվում է Վ. Շահվերդեանի Լրատվական խանութում: Գինն է 20 կոպ. օտար տեղերից զինում են հետեւեալ հասցեով: Тифлисъ, въ газетное Агентство В. Шавердова.

23—25

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

БРОШЮРА

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ

ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

ՍՏԱՅՎԱԾ ԵՆ չը թըջվող վերադրուներ 6—18 ռ., կրակեր 3 ռ., զրաֆիներ և պատուկներ 25 կ., բաժակներ 7 կ., զրիներ 144 հատ 20 կ. և այլն: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԵՋ: Նոյն տեղը ահագին քանակութեամբ վահա, թանաք, փոշիներ մեալներ սրբելու համար, մեծ քանակութեամբ թէյ առաջին հունձի 1 ռ. 10 կ.—մինչև 2 ռ. ամենալաւը ֆունտը առանց թղթի: Հրացաններ, ընկուկներ, երեսարիչներ, ալբոմներ, փօսաի թուղթ և այլն:

4—10

Յանձնուեցաւ մամուլին մը

„ՀԱՅՈՑ ԼԵՁՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ“, ԵՐԿՐՈՐԿ

ՏԱՐԱԴԱՅ ԴԱՍԱԳԻՐԲԸ

ԵՒ լոյս կը տեսնի մինչև ամսիս վերջը:

Յ. Նազարեանց

Приготовляю УЧЕНИКОВЪ въ нисшія и среднія учебныя заведенія. Подробныя УСЛОВІЯ узнать въ домѣ Теръ-Давидова, на Полицейской улицѣ, № 22.

Хосроевъ

Թիֆլիսի ռուսաց օպերայի առաջին ջութակ աճող Վ. Զ. ՍԱՎԻՆ ջութակի դասեր է տալիս: Անձամբ կարելի է տեսնել 5—7 ժամը: Գօրծինսկի հրապարակ տունը Տրեգուլի Ձե 7 բակի մէջ: Նոյն տեղը ծախվում է ՐՈՒԴԹԵՐԻ արհեստաւորի ջութակը 500 ռուբլով:

3—3 (1)

ԲԺԻՇԿ-ԿԻՆ ԱԼԷԲՍԱՆԴՐԱՎԱՍԻԼԵՎՆԱ ՍԱՄՈՅԼՕՎԻՉ ՎԵՐԱԴԱՆՆԱԿՈՎ ԱՐԱՍ-ԹՈՒՄԱՆԻՅԵ ՆՈՐԻՅ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԳՆԵՐԻՆ մասնաւոր բժշկանոցի մէջ ու իր տանը կուկիս, Մոստովայա փողոց Տուն Խմելիցիու Ձե 22

3—3 (1)

ԹԵՅՑ առաջին հունձի այս տարի չափազանց գոյնաւոր և հոտաւետ: Այդ թէյից ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ ստացված է 50,000 ֆունտ և ծախվում է 25% էժան և աւելի լաւ քան թէ ուրիշ տեղ: Որինսկի Լաւ ԿՕՆԴՕ Թէյ 1 ռ.—1 ռ. 20 կոպ., պատուական ՍԱՆՅԱ Թէյ 1 ռ. 40 կ., հիւնայի ՄՕՆԻԿ Թէյ 1 ռ. 60 կ. այս թէյ ամեն տեղ ծախվում է 2 ռ.—2 ռ. 50 կ., գեղեցիկ ԿԱՅՍԱՆ Թէյ 1 ռ. 80 կ. և ամենալաւ ֆունտ-ֆունտ Թէյ 2 ռ. մաքուր թէյ առանց թղթի: Նոյն տեղը սովորաբար լինում են 500 երկաթե ՄԱՀՃԱԿԱՆՆԵՐ 6 ռ.—60 ռ., երկաթե ԳՐԻՉՆԵՐ աճբող Անդրկովկասի համար, չօլոյադ ֆրայ, Շելիլդի ԳԱՆԱԿՆԵՐ, վերականգնող ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ մազերի համար, հրացաններ ԳԱՌԻ, ՌԵՎՕԼՎԵՐՆԵՐ ՎԵՐԻ, ՔԱՄԲԵՐ Բարնբերի, Կօլմանի նըշըշապ, ԱԼԲՈՒՆԵՐ Շվարցի կէս գնով: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ, ԹԻՖԼԻՍԻ ՄԵՋ ԱՐՇՐՈՒՆՈՒ ԳԱՂԼԵՐԵՅՈՒՄ № 156, 157, 158, 159 և 100:

39—100

ՌՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԻՐՆԵՐ

սիստեմատիքական ընթացք

Գրիգորի վարձկեան

Հայոց միջնակարգ ուսումնարանների համար մասն առաջին (ամբողջ թուեր)

Մամուլի տակն է և սեպտեմբերի առաջին օրերին լոյս կը տեսնի նոյն խնդիրների երկրորդ մասը (կոտորակ թուեր և երրորդական կանոններ):

Գինն է 40 կոպ.

Ուսումնարաններին զիջումն 20%:

Ծախվում է Վ. Շահվերդեանի լրագրական գործակալութեան խանութում:

Օտար տեղերից զինում են այս հասցեով: Тифлисъ, въ Агентство В. Шавердова:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱԿԱԶԻՆՆԵՐՈՒՄ գործակատար ցանկացողը կարող է զիմել Ներսիսեան դպրոցի աշակերտ ՍՏԵՓԱՆՆՈՍ Տէր Գրիգորեանին, ձեռնառու պայմաններով:

Տ. Գրիգորեան:

2—2

Պատրաստում եմ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ցածր և միջին ուսումնարանների համար: Մանրամասները իմանալ Պօլիցէյսկայա փողոցի վրա № 22 տունը Տէր-Գաւրգովի: Խօսքովան:

3—3

Թողնելով ԹԻՖԼԻՍԸ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ տեղը ծախվում է իր ՀՈՂԵՐԸ Նաբերեժնայ և Միխայլովսկայա փողոցների վրա, զրաֆիներ 25 կ., ալբոմներ կիսագնով և այլն:

11—15

ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍԻ ՄԷԿԻՑ

ՍԿԱՅԵՑ ՀՐԱՏԱՐԱԿՎ ԵՒ ՎԻԷՆՆԱՅՈՒՄ

L'ORIENTAL

ՅՐԱՆՍԵՐԷՆ ԹԵՐԹԸ, ԱՄԻՍԸ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ:

„Ժուրնալ դ'Օրիան“ լրագրի հին բաժանորդներին դադարեցրած թերթի տեղ կուղարկվի այդ նոր հրատարակութիւնը:

„L'Oriental“ թերթի տարեկան գինը 8 ռուբլ է, կէս տարվանը 4 ռուբլ:

Գրել կարելի է „ՄՇԱԿԻ“ խմբագրութեան մէջ, կամ ուղղակի Վիէնայում գիմելով հետեալ հասարակ հասցեով. Vienne (Autriche) M. F. Salles I. Neuer Markt 9.

Մ Ի Չ Ի փ ո ղ ո յ, Կ ա թ Օ լ ի չ է ս կ ա յ ա փ ո ղ ո յ ի ա ն կ ի լ ն № 13.

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԷՆՆԱՅԻ ՄԵՐԵԼ ամենայն տեսակի, ֆրանսիական և անգլիական երկաթե ԿՐԱՎԱԹՆԵՐ 8—30 ռ., չափանիւններ 250—25 ռ., սակօյգաժներ 1. 30—12 ռ., սոսնդ դուկն եր ձաւնապարհի 6—35 ռ., մարաններ (погребцы) 6—25 ռ., սա մօ վարն եր 60 կ.—1.25 ֆունտը, կուլանի պղնձե ամաններ, Գերմանիայի երկաթե ձմալով ամաններ. ու մի վալն ի կն եր մրա մօ ըն ի 38 ռ.—75 ռ., հրացաններ երկու ըւլանի 6—32 ռ., ու է վոլվէրն եր ամենայն տեսակ 3. 50—30 ռ., պատրոններ. (գուլաններ) ընկուկներ, սիգար Ռէնգարդի ֆարրիկից. պապիրոս և թամբաքու կուշարովի գրիլի պապիրոզի. 5,000 ֆունտ թէյ (չայ) եր. ՊԱՊՈՎՆԵՐԻ, ընկուկ. (սուխար չայու և կաֆէ) Էլնէմի. կօֆէ Էլնէմի և Միխէյսնի. Պետերբուրգում 40—1 ռ. 25 կ. հայիլինը ամենայն տեսակ 28 կ.—240 ռ., պրորկայ գինեկաճառների, հանքային և զարնջի (днзъ зельтерскихъ водъ и пива) զոյթուկ (пучк), զոյթուկներ սամուկարի և չայու, գանակ չանգալ գանազան ֆարրիկաների 1 ռ. 20 կ.—25 ռ. դուժինը. գրչակութիւն 1 ռ. 80 կ.—5—60 կ. գանակ ջրի 1—60 կ.—12 ռ., գանակ հացի 20 կ.—1 ռ., հատը, կուլանի 1—40 մինչև 3—20 կ. պրիբօր. միս կորեկ մաշիկու. Անգլիական ութներ, Բրիտանական չայիլներ, կաֆէ-նիկներ ամենայն տեսակ, ջաղացներ կաֆէի համար, ֆրիտեր—ջուր մաքրելու, կրամալ կարթիկն 18 կ., վաքս ֆրանսիայի ծակց, թուղթ փոշի, կանգիւրուներ, սուրբուչ, մաւիա, գրիչ երկաթե, գրչակութ, քարեալստակ, թանաք, թանաքամաններ, պրեսպապիներ, գրչներ սեղանի և չայու ֆրաժէ, վարչակի և բրիտանակի դուժինը 1—50 կ. մինչև 12 ռ., և չայու 45 կ.—5 ռ., չու-միչէէք 45 կ.—5 ռ., շամալաններ ամեն տեսակ 25 կ.—12 ռ. ջուլիտ, պոլ-սապօկաններ վարչակու, Ռեզիւնի ԿԱԼՕՇՆԵՐ, ամեն տեսակ, գուլաններ կանանց և մարդկերանց 15 կ.—50 կ. ջուլիտ, շապիկներ, մարդկերանց զարուստիկներ, գնալիներ 35 կ.—4—50 կ., հատ, սնձրեի և շքի. սանդրեր շիրմայու ոսկորէ, գուտապրեզովի և փայտէ, շուտկաններ գլխի, շրի, սապօկի, պոլի և կարտի համար, չուլքի թէլ (бумага) մատիկ կօժի և շալէ (гарьсѣ) ֆէլչատէք մարդկերանց և կանանց, պորտմաններ, քիսաներ, պապիրոսի ամաններ և մանր գոլաններին ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 կ.—30 կ., կտոր, հոտալէա ջրի, պուզրա, Կլիցերին ջրի քաղախ, հոտալէա պարաշոկներ ԿԻԼԵՐԻ ԼԱՐՕՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն:

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջւումով վերցիլեալ ապրանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻԲԱՅԻԼ ՏԵՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆՑԻ պահեստում: (ВЪ СКЛАДѢ) միջի փողոցում կաթնօրկաց փողոցի անկիւնում № 13.

Օտարաբաղաքացիք կարող են զիմել հետեւեալ հասցեով. Тифлисъ Михаилу Н. Теръ-Никогосову.

131—180

Մ Ի Չ Ի փ ո ղ ո յ, Կ ա թ Օ լ ի չ է ս կ ա յ ա փ ո ղ ո յ ի ա ն կ ի լ ն № 13.